ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ԴՍԵՂԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Հոկտեմբերի 9-ին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոլատյանը, ուղեկցությամբ Տ. Արսեն արքեպս. Բերբերյանի, Տ. Վիգեն եպս. Այքայյանի և Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաճարյանի, մեկնեց հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայր՝ Դսեղ, կատարելու Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերաօծումը:

Եկեղեցու մոտ Տեղապահ Սրբազանին դիմավորեցին Գուգարաց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը և եկեղեցական խորհրդի անդամները:

Աղոթքի և շարականների երգեցողությամբ վերաօծվեց հնամենի եկեղեցու Ս. Սեղանը և Ավանը: Վերաբացված եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ, հընթացս որի հավուր պատշաճի քարոզեց Տեղապահ Սրբազանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Ռոլանդ Ճառոյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, բազմաթիվ հյուրեր, դսեղցիներ: Արարողությանը ներկա էին նաև եկեղեցու վերանորոգման բարերարները՝ ամերիկահայ տեր և տիկին Սիմոնյանները, որոնց իր մասնավոր երախտիքի խոսքը հղեցին Տեղապահ և Առաջնորդ Սրբազանները:

Դսեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում է թաղված Հովհաննես Թումանյանի հայրը՝ գյուղի ժամանակի քահանա Տեր Թադևոսը: Հավարտ Ս. Պատարագի հոգեհանգստի արարողություն կատարվեց նրա շիրիմին:

Ապա ներկաները այցելեցին մեծ բանաստեղծի տուն-թանգարան:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ